COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Ստրասբուրգ, 21 հոկտեմբերի, 2008թ.

CCPE (2008)3

ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
(CCPE)

Կարծիք թիվ 3(2008)

«Դատախազության դերը քրեական իրավական ոլորտից դուրս»

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ընդունված՝ CCPE 3-րդ լիագումար նիստի ընթացքում
(Ստրասբուրգ, 15-17 հոկտեմբերի, 2008)

Ներածություն

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (այսուհետ՝ CCPE) հիմնադրվել է 2005թ. հուլիսի 13-ին Նախարարների կոմիտեի կողմից, դատախազությանն առնչվող հարցերով Կարծիքներ նախապատրաստելու նպատակով և քրեական արդարադատության ոլորտում դատախազության դերի մասին անդամ պետություններին տրված՝ Նախարարների կոմիտեի թիվ Rec(2000)19 Հանձնարարականի (այսուհետ՝ Հանձնարարական) արդյունավետ կատարման նպատակով:

2. Սույն Կարծիքը նախապատրաստվել է 2006թ. նոյեմբերի 29-ին Նախարարների կոմիտեի կողմից ընդունված CCPE աշխատանքները կազմակերպելու Գործողությունների պլանի[1] շրջանակներում, քանի որ CCPE-ին Նախարարների կոմիտեի կողմից ցուցում էր տրվել նյութեր նախապատրաստել Եվրոպայում դատախազությունների գործունեության վերաբերյալ:

3. Թիվ Rec(2000)19 Հանձնարարականը դիտարկում է քրեական արդարադատության ոլորտում դատախազների և դատախազությունների իրավիճակը, ինչպես նաև նրանց գործունեության հիմնական սկզբունքները, սակայն չի խոսում դատախազների դերի մասին քրեական արդարադատության ոլորտից դուրս: Ամեն դեպքում, անդամ պետությունների մեծ մասում դատախազները տարբեր ծավալի դեր ու պարտականություններ ունեն նաև քրեական արդարադատության ոլորտից դուրս:

4. Եվրոպայում առկա դատախազական ծառայությունների տարբեր համակարգեր, այդ թվում՝ քրեական արդարադատության ոլորտից դուրս, ձևավորվել են իրավական և պատմական տարբեր ավանդույթներից: Անդամ պետություններն իրենք են որոշում, թե ինչպես սահմանել իրենց իրավական համակարգն ու գործունեությունը՝ ապահովելով լիակատար հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ, օրենքի գերակայության սկզբունքը և իրենց կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները, այդ թվում՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) նախատեսված պարտավորությունները: Անդամ-պետություններում դատախազությունների դերը և լիազորությունների շրջանակները, այդ թվում՝ մարդու իրավունքների և հանրային շահերի պաշտպանության ոլորտում, սահմանվում են անդամ-պետությունների ներպետական օրենսդրությամբ: Դատախազների ոչ պատժիչ բնույթի գործառույթների առկայությունը

[1] CCPE (2006)05 Rev վերջնական

կամ բացակայությունը պայմանավորված են մշակութային ժառանգությամբ, իրավական ավանդույթներով և ժողովուրդների սահմանադրական պատմությամբ:

5. Կարծիքը նախապատրաստելիս, CCPE հաշվի է առել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) նախադեպային իրավունքը և հատուկ ուշադրություն է դարձրել Եվրոպայի խորհրդի նպատակներին, օրենքի գերակայության սկզբունքին, Եվրոպայի մշակութային առանձնահատկության և բազմազանության զարգացմանը: Դատարանն անդրադարձել է Կոնվենցիայի այն խախտումներին, որոնք առնչվում են դատախազների ոչ պատժիչ բնույթի լիազորություններին և ընդգծել է պատշաճ ընթացակարգ ապահովելու պահանջը: Հաշվի են առնվել նաև Խորհրդարանական վեհաժողովի «Օրենքի գերակայության սկզբունքի հիման վրա կառավարվող ժողովրդավարական հասարակությունում դատախազության դերի մասին» թիվ 1604 Հանձնարարականը, ինչպես նաև նշված Հանձնարարականին Նախարարների կոմիտեի կողմից տրված պատասխանը:

6. Առաջին իսկ քննարկման պահից Եվրոպայի գլխավոր դատախազները գիտեին, որ «*քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազության լիազորությունները կարող են հիմնավորված լինել, եթե գտնվում են դատախազության ընդհանուր խնդիրների և «հասարակության անունից և հանրային շահից» գործելու շրջանակներում, ապահովում են օրենքի կիրառումը թիվ (2000)19 Հանձնարարականի նախատեսած կարգի համաձայն, և եթե նմանատիպ գործառույթները չեն խաթարում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքը, և եթե պահպանվում է այն սկզբունքը, որ միայն իրավասու դատարաններ են լիազորված լուծել վեճերը, կողմերին լսելուց հետո»:*

7. Դատախազների քրեական ոլորտից դուրս իրավասություններին նվիրված Բրատիսլավայի կոնֆերանսից հետո Ցելեի կոնֆերանսի կողմից ճանաչվեց այն փաստը, որ. «*իրավական համակարգերի մեծ մասում դատախազները ունեն պարտականություններ (որոշ դեպքերում՝ կարևոր պարտականություններ) նաև քաղաքացիական, կոմերցիոն, վարչական գործերով, ինչպես նաև լիազորություններ հսկողություն իրականացնելու Կառավարության որոշումների օրինականության նկատմամբ*»: Ամեն դեպքում, նույն Կոնֆերանսի կողմից ճանաչվեց նաև այն փաստը, որ ներկայումս այս ոլորտում առկա չեն միջազգայնորեն ճանաչված առաջնորդող սկզբունքներ, ինչպես նաև իր Բյուրոյին ցուցում տվեց հաջորդ լիագումար նիստին տվյալ թեմայով կարծիք նախապատրաստել:

8. Արդյունքում Կարծիքը ներկայացվեց 2005թ. Բուդապեշտի կոնֆերանսի ժամանակ, որը ամփոփում և գնահատում էր Բյուրոյի կողմից նախապատրաստված հարցաշարին անդամ պետությունների կողմից տրված պատասխանները: Կարծիքը դարձավ քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազների գործունեության վերաբերյալ առաջին ուսումնասիրությունը, իսկ CPGE/ Եվրոպայի գլխավոր դատախազների խորհրդի նիստը, որի հիմքում ընկած էր հենց նշված Կարծիքը, հանդիսանում է տվյալ թեմայի վերաբերյալ առաջին քննարկումը: Կոնֆերանսը *«եզրակացրեց, որ այս կարևոր և բարդ խնդիրը արժանի է հետագա ուսումնասիրության»…*

9. Մոսկվայի կոնֆերանսը (2006) եզրակացրեց. « ….*կոնֆերանսի ընթացքում քննարկված լավագույն պրակտիկան քրեական արդարադատության ոլորտից դուրս, դատախազությունների կողմից անձանց արդյունավետ պաշտպանության ոլորտում, պետք է հաշվի առնվի այն անդամ պետությունների կողմից, որտեղ դատախազությունները ունեն նման լիազորություններ, եթե նշված դրական փորձի կիրառումը հնարավոր է*»:

10. Եվրոպայի գլխավոր դատախազների կոնֆերանսը (Սանկտ-Պետերբուրգ, 2008) ընդգծեց *«հասարակությունում խոցելի խմբերի, հատկապես երեխաների, երիտասարդների, վկաների, զոհերի, հաշմանդամների, ինչպես նաև ընդհանուր առմամբ բնակչության սոցիալական և տնտեսական իրավունքների արդյունավետ պաշտպանության աճող կարիքը*»: Կոնֆերանսի արդյունքում Կարծիք ընդունվեց, որ դատախազները կարող են կարևոր դեր կատարել այս ոլորտում և Պետությունը գնալով առավել մեծ ներգարվվածություն է ձեռք բերում առկա խնդիրների լուծման գործում, մասնավորապես շրջակա միջավայրի պաշտպանության, սպառողների իրավունքների և հանրային առողջության ոլորտներում, ինչն էլ կարող է տանել դատախազության դերի ընդլայնմանը»:

11. CCPE հաշվի է առել նաև Եվրոպայի գլխավոր դատախազների կոնֆերնասների արդյունքում ընդունված կարծիքները: Թեմայի վերաբերյալ նախկինում մշակված հարցաշարը լրացվել է Պոպովոյում տեղի ունեցած CCPE Բյուրոյի 3-րդ նիստի ժամանակ (Լեհաստան, 4-5 հունիսի 2007) ապահովելու համար խնդրի առավել մանրամասն ուսումնասիրությունը: Պոպովոյում լրամշակված հարցաշարին 43 անդամ պետությունների կողմից տրված պատասխանների հիման վրա կազմվել և Սանկտ-Պետերբուրգում ներկայացվել է նոր մանրամասն զեկույց: Կոնֆերանսը ձևակերպել է

տարբեր հատուկ պահանջներ ոչ պատժիչ իրավասությունների վերաբերյալ, որոնք արտացոլված են սույն Կարծիքում:

12. Սույն Կարծիքի նախապատրաստման ընթացքում հաշվի են առնվել նաև այլ միջազգային մարմինների և կազմակերպությունների կողմից ընդունված փաստաթղթերը, այդ թվում՝ ՄԱԿ-ի և ԱՊՀ:

13. Սույն Կարծիքի նպատակն է. CPGE (Եվրոպայի գլխավոր դատախազների խորհրդի), CPE (Եվրոպայի դատախազների խորհրդի), CCPE (Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի) կողմից նախկինում կատարված աշխատանքների հիման վրա սահմանել Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծ մասում քրեաիրավական ոլորտից դուրս դատախազությունների կարգավիճակը, պրակտիկան, արդյունավետ փորձը, ինչպես նաև ընդունել ոլորտի զարգացմանն ու ընդլայնմանը նպաստող եզրակացություններ: Սույն Կարծիքի նախապատրաստումը ցույց տվեց, որ հետագա աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազությունների իրավասությունների վերաբերյալ Հանձնարարականի սկզբունքները:

II. Ներկա իրավիճակը

14. Հաշվի առնելով հարցաշարի պատասխանները, ինչպես նաև CPGE, CPE նստաշրջանների արդյունքները, CCPE գտնում է, որ ոչ պատժիչ գործառույթների ոլորտում Եվրոպայի դատախազական համակարգերի ներկայիս իրավիճակը կարող է նկարագրվել հետևյալ կերպ:

15. Կարելի է առանձնացնել անդամ պետությունների երկու խումբ. պետություններ, որոնցում դատախազությունները քրեական արդարադատության ոլորտից դուրս լիազորություններ չունեն և պետություններ, որոնցում դատախազությունները քրեական արդարադատության ոլորտից դուրս ունեն որոշ կամ ծավալուն լիազորություններ:

16. Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծ մասում դատախազություններն ունեն առնվազն մի քանի լիազորություններ և գործառույթներ քրեական արդարադատության ոլորտից դուրս: Իրավասությունների ոլորտները տարբեր են և ներառում են քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, վարչական, ընտրական, ինչպես նաև շրջակա միջավայրի, սոցիալական իրավունքների և խոցելի խմբերի՝ փոքրամասնությունների, անգործունակ կամ շատ ցածր եկամուտ ունեցող անձանց

իրավունքների պաշտպանության ոլորտները: Որոշ անդամ պետություններում դատախազությունների խնդիրները և աշխատանքի ծավալը այս ոլորտում կարող է գերազանցել քրեական արդարադատության ոլորտում դատախազների դերին: Մյուս կողմից որոշ անդամ պետություններ հայտարարում են, որ այս ոլորտում իրենց իրավասությունները շատ կարևոր չեն կամ պրակտիկայում շատ հազվադեպ են կիրառվում:

17. Որոշ անդամ պետություններում դատախազության համակարգերը ոչ պատժիչ բնույթի իրավասություններ չունեն:

18. Քաղաքացիական իրավունքի խնդիրները առնչվում են տարբեր ոլորտների հետ. քաղաքացիական, ընտանեկան, կոմերցիոն, աշխատանքային, շրջակա միջավայրի, սոցիալական իրավունքի: Խոսքը գնում է մասնավորապես ամուսնության չեղյալ համարելու, մահվան արձանագրման, հայրության մերժման, որդեգրման չեղյալ համարման, անձանց առողջապահական հաստատությունում պահելու, իրավագործունակության սահմանափակման, երեխաների իրավունքների պաշտպանության, ընկերությունների տնօրենների որոկազրկման, Պետության սեփականության իրավունքների և շահերի պաշտպանության, սեփականաշնորհման, դատական համակարգի կողմից հասցված վնասի փոխհատուցման, որոշ (համակարգված) մասնագերտների վարքագծի էթիկայի նկատմամբ հսկողության, քաղաքացիական ասոցիացիաների փլուզման, աշխատանքային կամ սոցիալական կարգավորումների խախտման մասին հայտարարությունների, շրջակա միջավայրի կառավարման մասին: Բացի այդ, որոշակի Պետություններում դատախազները կարող են գործել որպես պետության իրավական ներկայացուցիչներ և նախաձեռնել գործողություններ, օրինակ՝ դատարանում հայց հարուցել հանրային սեփականությանը վնաս հասցրած ածանց դեմ:

19. Որոշ անդամ պետություններում դատախազությունները կարող են պաշտպանել ոչ միայն մեկ մի քանի անձանց իրավական շահերը և իրավունքները, այլ նաև արձագանքել այն խախտումներին, որոնք առնչվում են միաժամանակ բազմաթիվ անձանց իրավունքների հետ: Պետական կամ տեղական մարմինների կողմից ընդունված օրենքների և իրավական ակտերի օրինականության նկատմամբ հսկողության իրականացնելու իրավասության միջոցով դատախազությունը դառնում է անձանց մեծ խմբերի կամ ընդհանրապես հանրության իրավունքներն և ազատությունները պաշտպանելու իրական գործիք:

20. Հանրային իրավունքի գործունեության ոլորտում կարող են առանձնացվել երկու ընդհանուր առանձնահատկություններ: Բոլոր երկրներում, որտեղ դատախազները ունեն վարչական իշխանությունների նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորություններ, նրանք նաև լիազորույթուններ ունեն դատական հայց հարուցել այդ մարմինների որոշումների դեմ: Որոշ երկրներում դատախազությունները իրավունք ունեն օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքներ կազմելու, օրինակ դատական համակարգի կառուցվածքի, նյութական իրավունքի ընթացակարգերի վերաբերյալ: Հատուկ իրավասություններ որոշ դատախազությունների տրված են, օրինակ, վարչական որոշումների ոլորտում: Նրանք կարող են իրավական կարծիքներ նախապատրաստել օրենսդրության նախագիծ-առաջարկների վերաբերյալ, մասնավորապես, պարտադիր միջնորդության խնդրանքի կամ Պետության դեմ դատական գործընթաց նախաձեռնելուց առաջ ոչ դատական միջոցներով լուծման ուղիների թեմայով, կալանքի ընթացակարգը պաշտպանելու նկատմամբ հսկողության վերաբերյալ, օրենսդրության կատարման մոնիտորինգի և ուսումնասիրության, նախազգուշացման, բողոքարկման կամ մտահոգություն արտահայտելու վերաբերյալ, կատարման հետաձգման իրավունքով կամ առանց դրա, հակասահմանադրականությունը բացառելու համար գործողություններ նախաձեռնելու վերաբերյալ, ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների հավաստիության վերաբերյալ, Կառավարության նիստերին մասնակցելու և քննություն իրականացնող խորհրդարանական հանձնաժողովների անդամության վերաբերյալ: Որոշ երկրներում դատախազներն ունեն որոշակի խորհրդատվական առաքելություններ, մասնավորապես, քաղաքացիական, վարչական, աշխատանքային կամ սոցիալական իրավունքի ոլորտներում, խորհրդատվական կարծիքների ընդունումը կարող է լինել իրենց կողմից իրականացվող միակ լիազորությունը:

21. Դատավարական իրավունքի տեսանկյունից, որոշ լիազորություններ սահմանափակվում են դատական գործողությունների նախաձեռնությամբ (սա բնորոշ է քաղաքացիական իրավունքի պարտավորություններին, բայց կարող է վերաբերել նաև որոշ հանրային իրավունքի պարտավորություններին), մինչդեռ այլ լիազորություններ, հիմնականում հանրային իրավունքի ոլորտի վերաբերյալ լիազորությունները, իրականացվում են ուղղակի (դատարանից դուրս) գործունեությամբ (այդ թվում բողոքարկումներ, նախազգուշացումներ, ուսումնասիրություններ) կողմերին հնարավորություն վերապահելով դիմել դատարան: Որոշ երկրներում, տրիբունալների ծավալների ընդլայնումից խուսափելու համար, դատախազներին տրվել են նաև

լիազորություններ կայացնել որոշումներ անձանց կողմից ներկայացված որոշ դիմումների վերաբերյալ՝ դիմող կողմին հնարավորություն վերապահելով դիմել դատարան:

22. Դատական գործողությունները, անկախ դատավարական կարգից (քաղաքացիական վարույթի կամ հատուկ վարչական իրավունքի կարգի), կապված են դատական գործընթացի հետ. դատախազները այդտեղ մասնակցում են որպես կողմ: Դատախազությունները, քաղաքացիական դատարանի գործընթացին մասնակցելիս, որպես միջնորդներ, չունեն հատուկ լիազորություններ կամ իրավասություններ և ունեն մյուս կողմերի հետ հավասար լիազորություններ: Նրանց կարգավիճակը բացառիկ չէ, դատական գործընթացը կարող է նախաձեռնվել այլ շահագրգիռ անձանց կողմից նույնպես: Այդպիսի դեպքերում, գործերը լուծելու հարցում դատախազները չունեն որոշում կայացնելու լիազորություններ, նրանց կողմից ընդունվող որոշումները վերաբերում են միայն գործի հարուցմանը՝ քաղաքացիական դատարան հայց ներկայացնելու միջոցով:

23. Համարյա բոլոր երկրներում, որտեղ դատախազները քրեական ոլորտից դուրս լիազորություններ ունեն, նրանք լիազորված են նախաձեռնել դատական նոր գործընթաց, և որպես դատավարության մասնակից կողմ՝ օգտագործել սովորական և ոչ սովորական միջոցներ (միջնորդություններ): Այնուամենայնիվ, կարելի է ռանձնացնել որոշակի կանոններ (կիրառել ոչ սովորական միջնորդության պրակտիկան կամ արգելել վարույթի վերաբացման մասին առաջարկները, արգելել գործի լուծումը կողմերից մեկի անունից):

24. Որոշ անդամ պետություններում դատախազները ունեն արդարադատության համակարգի կառավարման և ղեկավարման ոլորտում հատուկ լիազորություններ կամ դատական, գործադիր և օրենսդիր իշխանությունների նկատմամբ խորհրդատվական գործառույթներ:

25. Անկախ իրենց բովանդակային կամ դատավարական տարբերություններից, դատախազների ոչ պատժիչ գործունեության խնդիրները շատ ավելի փոխկապակցված են. օրենքի գերակայության հաստատում (ժողովրդավարական որոշումների ամբողջականություն, օրինականություն, իրավունքի դիտարկում, օրենքի խախտումների նկատմամբ միջոցների կիրառում) անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանություն (մասնավորապես, այն անձանց իրավունքները, որոնք իրենք չեն կարող պաշտպանել իրենց իրավունքները՝ փոքրամասնություններ, անհայտ բնակության վայրով անձինք, անգործունակներ), պետության շահերի և սեփականության պաշտպանություն, հանրային շահերի պաշտպանություն (կամ հանրային կարգի

պաշտպանություն), դատարանների իրավասությունների հավասարակշռության ապահովում (օրենքի շահերից բխող դատարանի վերջնական որոշումներից պաշտպանության միջոցներ, բարձրագույն իրավասության դատարաններում որպես կողմ հանդես գալու գործառույթ):

26. Քրեական դատավարության շրջանակներից դուրս լայն իրավասություններ ունեցող դատախազությունները իրենց կառուցվածքներում ունեն ոչ պատժիչ ոլորտում գործող հատուկ կամ խառը ստորաբաժանումներ: Որոշ անդամ պետություններում հատուկ ստորոբաժանումներ չկան, սակայն այդ պարտականությունները դրված են հատուկ նշանակված դատախազների վրա, որոնք նշանակվում են իրենց ստորաբաժանման կարիքներից ելնելով: Ելնելով գործերի քանակից, նշանակված դատախազները կարող են չներգրավվել քրեաիրավական ոլորտի գործերում:

27. Մյուս կողմից, CCPE տեղյակ է քրեական արդարադատության ոլորտից դուրս գործող դատախազների ոչ պատշաճ պրակտիկայի դեպքերի մասին, որոնք գնահատվել են Դատարանի կամ համապատասխան Սահմանադրական դատարանների կողմից կամ քննադատության են ենթարկվել Եվրոպայի խորհրդի այլ մարմինների կողմից: Ապակողմնորոշիչ են հիմնականում այն դեպքերը, երբ առանց պատճառների մերժվում է քաղաքացիական դատավարության կարգով դատական գործընթացի նախաձեռնումը, տեղի է ունենում միջամտություն դատական գործընթացին առանց խելամիտ շահի (Պետության կամ հանրության շահի, որը հիմնվում է իրավունքների պաշտպանության վրա), ինչը խախտում է կողմերի հավասարության սկզբունքը, չեղյալ է համարում դատարանների վերջնական որոշման սկզբունքը, ինչն էլ խախտում է իրավական ճշգրտության սկզբունքը (per judicata)[2], դատախազները մասնակցում են վճռաբեկ դատարանների խորհրդին՝ խառնելով դատավորների որոշում կայացնելու լիազորությունները դատախազական պարտականությունների հետ, կիրառվում է դատավարությունը սկսելու անսահմանափակ իրավունք:

28. Շատ անդամ պետություններում խնդիր է նաև դատախազների մասնակցությունը դատարանների նախադեպային իրավունքի կոնսոլիդացիայի գործում: Դատախազների դերը այս ոլորտում հնարավորություն չի տա դատախազներին կիրառել ոչ պտշաճ ազդեցություն դատավորների կողմից ընդունվող վերջնական որոշման նկատմամբ:

[2] Մեկ անգամ ուսումնասիրված գործի կրկնակի ուսումնասիրման անթույլատրելիության սկզբունք

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

29. Ներկայումս քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազության գործունեությունը առաջին հերթին պայմանավորված է հասարակության կողմից առաջադրվող՝ մարդու իրավունքների ու հանրային շահի պաշտպանության պահանջով:

30. Բացի դատարանների և այլ ինստիտուտների, օրինակ Մարդու իրավունքի պաշտպանի ինստիտուտի, դատախազության դերը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, սահմանված է ներպետական օրենսդրությամբ և որոշ անդամ պետություններում գնահատվում է որպես շատ կարևոր:

31. Քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազության պարտականությունների, գործառույթների վերաբերյալ միջազգայնորեն ճանաչված նորմեր և կանոններ չկան: Միաժամանակ դատախազությունները կարևոր նշանակություն ունեն մարդու իրավունքների պաշտպանության, օրինականության և օրենքի գերակայության պաշտպանության և քաղաքացիական հասարակության ամրապնդման ոլորտներում: Քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազությունների գործառույթները պայմանավորված են ներպետական իրավական և պատմական ավանդույթներով: Յուրաքանչյուր պետության ինքնավար իրավունքն է սահմանել մարդու իրավունքների և հանրային շահերի պաշտպանության ոլորտում իր գործառույթներն իրականացնելու ինստիտուցիոնալ և իրավական կարգը, համաձայն օրենքի գերակայության սկզբունքի և իր կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների: «Ավելի հզոր Եվրոպայում» առկա համակարգերի տարբերությունների հավասարակշռությունը հիմնվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի դրույթների վրա՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը:

32. Եվրոպայի բոլոր պետությունների առջև պահանջ է առաջադրված զարգացնել և ուժեղացնել մարդու իրավունքների պաշտպանության ներուժը բոլոր մարմիններում, այդ թվում՝ դատարաններում և դատախազություններում: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության գործառույթներն իրականացնելու հաջողությունը պետք է պայմանավորված լինի ոչ թե մարդու որոշ իրավունքների և ընթացակարգերի թուլացման հաշվին այլ իրավունքների և ընթացակարգերի ուժեղացմամբ, այլ նրանց համատեղ զարգացմամբ: Նրանք բոլորը ունեն մեկ նպատակ՝ անձանց իրավունքների և ազատությունների և հասարակության ու պետության շահերի պաշտպանությունը:

33. Շատ եվրոպական երկրներում աճում է օմբուդսմենի դերը (ինչպես ընդհանուր իրավասությունների տեսանկյունից, այնպես էլ մասնագիտացված՝ անձանց պաշտպանության ոլորտում, օրինակ, կանանց և երեխաների): Անհրաժեշտ է որպեսզի հնարավորինս շատ մարմիններ, կազմակերպություններ և պաշտոնատար անձինք ներգրավված լինեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մեջ: Մարդիկ պետք է հնարավորություն ունենան ընտրելու իրենց շահերի պաշտպանության պաշտոնական կամ ոչ-պաշտոնական ընթացակարգը, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կառույցները ներառող ընթացակարգերը:

34. Ժողովրդավարական պետությունում դատախազները կարող են ունենալ կամ կարող են չունենալ քրեական իրավունքի ոլորտից դուրս իրավասություններ: ԵԴԽԽ կոչ է անում այն պետություններին, որտեղ դատախազությունը ունի քրեական արդարադատության ոլորտից դուրս իրավասություններ ապահովել այդ գործառույթների իրականացման հետևյալ սկզբունքները.

ա. քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազների պարտականությունների, գործունեության, դատարանների կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետք է ապահովել իշխանությունների տարանջատման սկզբունքը,

բ. քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազների գործառույթները պետք է լինեն անկողմնակալ և արդար,

գ. այս գործառույթները պետք է իրականացվեն «հասարակության անունից և հանրային շահերից ելնելով» ապահովելու համար օրենքի կիրառումը՝ հարգելով հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև դատախազներին օրենքով նախատեսած իրավասությունների շրջանակներում և Կոնվենցիայի և Դատարանի նախադեպերի հիման վրա,

դ. նման լիազորությունները պետք է հնարավորինս մանրամասնորեն կարգավորվեն օրենքով,

ե. պետք է բացառել որևէ ոչ պատշաճ միջամտություն դատախազության աշխատանքներին,

զ. քրեական իրավունքի ոլորտից դուրս գործելիս, դատախազները պետք է ունենան մյուս կողմերին հավասար իրավունքներ ու պարտականություններ, պետք է բացառել դատավարության ընթացքում դատախազության գերակա դիրքը (կողմերի հավասարության սկզբունք),

է. ոչ քրեական գործերով հանրային շահը պաշտպանելու նպատակով հասարակության անունից դատախազության գործունեությունը պետք է չխախտի դատարանի որոշումների պարտադիր լինելու սկզբունքը (res judicata) որոշ բացառություններով, որոնք նախատեսվում են միջազգային պարտավորություններով, այդ թվում՝ Դատարանի նախադեպերով,

ը. օրենքով պետք է նախատեսել դատախազների պարտավորությունը հիմնավորել իրենց գործողությունները և այդ հիմնավորումների բաց լինելու սկզբունքը մասնակից կամ շահագրգիռ անձանց համար,

թ. պետք է սահմանել անձանց և հաստատությունների իրավունքը, որոնք քաղաքացիական գործով ներգրավված են կամ շահագրգիռ կողմ են, ինչպես նաև հայց հարուցել դատախազների կիրառած միջոցների կամ չներկայանալու դեմ,

ժ. անհրաժեշտ է հետևել քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազությունների գործունեության վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքի զարգացումներին, որպեսզի ապահովվի վճիռների համաձայն այդ գործունեության իրավական հիմքը և համապատասխան պրակտիկան:

35. Ելնելով գործերի քանակից, քրեական իրավունքի ոլորտից դուրս իրավասություններ ունեցող դատախազություններին խորհուրդ է տրվում ունենալ մասնագիտացված ստորաբաժանումներ, իսկ եթե անհնարին է, ապա իրենց կառուցվածքում ունենալ դատախազներ և բավարար ունակություններով օժտված մարդկային, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսներ ոչ պատժիչ պարտականությունները իրականացնելու համար:

36. Դատախազությունները կոչ են արվում քրեական իրավունքի ոլորտից դուրս գործունեությունն իրականացնելիս, ստեղծել և զարգացնել, ըստ անհրաժեշտության, համագործակցություն կամ շփումներ օմբուդսմենի կամ օմբուդսմենի տիպի հաստատությունների հետ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության, և մասնավորապես լրատվամիջոցների հետ:

37. Յուրաքանչյուր համակարգում պետք է ստեղծել քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազության գործունեության վերաբերյալ մոտեցումներ լավագույն պրակտիկայի և հանձնարականների շրջաբերականները և ուղեցույցները համաձայնեցման նպատակով:

38. Անդամ պետությունների դատախազությունները պետք է իրականացնեն քրեական ոլորտից դուրս գործունեության մեջ ներգրավված դատախազներին:

39. Անդամ պետությունների դատախազությունները պետք է փոխանակեն իրենց փորձը, այդ թվում՝ լավագույն պրակտիկան, օրենսդրական ակտերը և այլ նորմատիվ նյութերը:

40. CCPE -ն Նախարարների կոմիտեին խորհուրդ է տալիս ուսումնասիրել մշակված ընդհանուր եվրոպական սկզբունքները, մասնավորապես, քրեական ոլորտից դուրս դատախազների կարգավիճակին, իշխանություններին, պրակտիկային առնչվող սկզբունքները: Խնդիրը պետք է դիտարկվի մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների, իշխանությունների տարանջատման ժողովրդավարական սկզբունքի ներքո և ընդգծի կողմերի հավասարության սկզբունքի կարևորությունը:

Կարծիք թիվ 3 (2008)
Ընդունված՝ CCPE 3-րդ լիագումար նիստին
(Ստրասբուրգ, 15-17 հոկտեմբերի 2008)

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

CCPE կարծիք է արտահայտում, որ այն Պետությունները, որտեղ դատախազությունները քրեաիրավական ոլորտից դուրս իրավասություններ ունեն, պետք է ապահովեն որպեսզի իրենց գործառույթները իրականացվեն ժողովրդավարական պետությունը օրենքի գերակայության սկզբունքի համաձայն կառավարելու համաձայն, մանավորապես.

ա. քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազների պարտականությունների և գործունեության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում դատարանների դերի հարցում պետք է հարգվեն իշխանությունների տարանջատման սկզբունքը,

բ. քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազների գործառույթները պետք է բնութագրվեն անկողմնակալությամբ և արդարությամբ,

գ. այս գործառույթները պետք է իրականացվեն «հասարակության անունից և հանրային շահերից ելնելով» ապահովելու օրենքի կիրառումը՝ հարգելով հիմնարար իրավունքներն ու ազատությունները և դատախազներին օրենքով նախատեսած իրավասությունների շրջանակներում, ինչպես նաև Կոնվենցիայի և Դատարանի նախադեպերի հիման վրա,

դ. նման լիազորությունները պետք է հնարավորինս մանրամասնորեն կարգավորվեն օրենքով,

ե. պետք է բացառել որևէ ոչ պատշաճ միջամտություն դատախազության աշխատանքներին,

զ. քրեական իրավունքի ոլորտից դուրս գործելիս, դատախազները պետք է ունենան նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ և մյուս կողմերը և չպետք է ունենան գերակա դիրք դատավարության ընթացքում (կողմերի հավասարության սկզբունք),

է. ոչ քրեական գործերով հանրային շահը պաշտպանելու նպատակով հասարակության անունից դատախազության գործունեությունը պետք է չխախտի դատարանի որոշումների պարտադիր լինելու սկզբունքը (res judicata) որոշ բացառություններով, որոնք նախատեսվում են միջազգային պարտավորություններով, այդ թվում՝ Դատարանի նախադեպերով,

ը. դատախազների պարտավորությունը հիմնավորել իրենց գործողությունները և այդ հիմնավորումները մասնակից կամ շահագրգիռ անձանց բաց լինելու սկզբունքը պետք է նախատեսվեն օրենքով,

թ. պետք է սահմանվի անձանց և հաստատությունների իրավունքը, որոնք ներգրավված են կամ շահագրգիռ կողմ են քաղաքացիական գործում, հայց հարուցել դատախազների կիրառած միջոցների կամ չներկայանալու դեմ,

ժ. անհրաժեշտ է հետևել քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազությունների գործունեության վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքի զարգացումներին համապատասխան վճիռների համաձայն ապահովելու այդ գործունեության իրավական հիմքը և համապատասխան պրակտիկան:

CCPE Նախարարների կոմիտեն խորհուրդ է տալիս ուսումնասիրել մշակված ընդհանուր եվրոպական սկզբունքները, մասնավորապես, քրեական ոլորտից դուրս դատախազների կարգավիճակին, իշխանություններին, պրակտիկային: Խնդիրը պետք է դիտարկվի մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների, իշխանությունների տարանջատման ժողովրդավարական սկզբունքը և կողմերի հավասարության սկզբունքի կարևորությունը: